

հաստատեցաւ Կարապետ քահ. Վարդապետեան ի միաբան Ազուլեաց եկեղեցւոյ Շուշոյ. թ. 964:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Պ. Ղազարու Մայիլեան Բագուեցւոյ, սակա ի գլուխ հանելոյ զնորոգութիւն ջրանցիցն վանուց Գանձասարայ. թ. 968:

— Յանուն Կոնսիստ. Արցախայ, որով պատուիրեցաւ առաքել առ Դեր. Մեսրոպ Արքապիսկոպոսն զպատրաստի քահանայացուս վիճակին ի ձեռնադրել. թ. 969:

— Յանուն նոյն Կոնսիստ., որով պատուիրեցաւ տալ դադարեցուցանել ի քահանայագործութենէ զՄատեփաննոս և զՄէկորոպ քահանայս Ղազանչեցւոց Ամենափրկիչ եկեղեցւոյն Շուշոյ, վասն անվայել ընթացից նոցին ի ժամ ժամերգութեան. թ. 970:

— Յանուն Պ. Թէոգորոսի Խաչեան և Պ. Տիգրանայ Ազամալեան Շուշեցւոց, որով նշանակին Հոգաբարձուք շինութեան վանուցն Գանձասարայ, որպէս օգնականք և աջակիցք վանահօրն. թ. 971:

— Յանուն Կոնսիստ. Արցախայ, որով պատուիրեցաւ տալ նախապէս յարդեանց կալուածոց վահօրէիցն Արցախայ 400 բուրքիս նորոգ Հոգաբարձութեան Գանձասարայ, վասն շինութեան ճանապարհի վանուցն. թ. 972:

— Յանուն վանահօր վանուցն Գանձասարայ Տ. Անտոն վարդապետի, որով յայտ արարաւ նմա կարգումն Հոգաբարձութեան. թ. 974:


— Յանուն Հոգաբարձութեան թեմակ. գլուխանոցին Շուշոյ, որով հրաւիրեցան անձնափանորդք նոցին ի պաշտօն՝ ի տեղի հրաժարելոցն. թ. 975:

— Յանուն Կոնսիստ. Արցախայ, ըստ մտաց վերոյիշեալ Կոնդակին. թ. 976:

— Յանուն Դարեգին քահ. Յովհաննիսեան անդամոյ Կոնսիստ. Արցախայ, որով շընորհեցաւ նմա պատիւ աւագութեան. թ. 977:

— Յանուն Յակոբ քահ. Այվազեան Շուշեցւոյ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական. թ. 978:

— Յանուն Մինօգի ս. Էջմիածնի, որով յայտ արարաւ վերադարձ Նորին Սրբութեան ի Մայր Աթոռն. թ. 986:



ԿՐՈՆԱԸ ԿԱՆ—Ք Ը ԺԻՆ

ՀԱՄԱՏԸ ԵՒ ՀՐԱՃՔՔ.

«Եւ ոչ կարեր անդ եւ ոչ մի իմ գորութիւն առնելու բայց սակաւ հիւանդաց մեսմ եղանակ թշկեր զնոսա. և զարմանայ վասն անհաւատութեան նոցա»:

Մարկ. Զ. 5. 6.

ԸԱՑ և շատ Քրիստոնեաների համար մարգիւթեան Փրկիչը մի արտաքոյ կարգի եւակ է միայն, մի տարօրինակ հրաշագործ, որ ուր գնում էր հրաշքներ էր գործում և գորանով ապացուցանում իւր Աստուած լինելը. շրջապատողներից ոմանք տեսնելով այդ հրաշքները հաւատացել են, որ նա Աստուած է, ուրիշները տեսել են, բայց չեն հաւատացել. մենք ևս, եթէ հաւատում ենք միայն այն պատճառով ենք հաւատում, որ համոզուած ենք, թէ ճշմարիտ են ականատեսների պատմածները Նորա մասին, թէ Նա յիրաւի շատ հրաշքներ արել է և ինչ որ կամենար կաներ: Բայց ահա մի գեղաք, որի համար նոյն ինքն աւետարանիչը վկայում է, թէ Քրիստոս ոչինչ անել չի կարողացել: Նա, որի ձեռքուութեան է, և չկայ մի բան որ առանց Նորան եղած լինի. Նա, որ Ջրի վերայ ման էր գալիս և քամիներին սաստում, որ ամէն ցաւ բժշկում էր և ոչ մի կարօտեալի ձեռնունայն չեր արձակում, որին մինչեւ անդամ մահը հնազանդում էր և իւր կալանաւորներին կրկին արձակում՝ տարակուսած կանգ է առել այստեղ, «և ոչ կարեր՝ և ոչ մի ինչ զօրութիւն առնել»:—Որչափ տարրեր է Քրիստոսի աւետարանն ուրիշ կրօնների առասպելապատում զրբերից՝ որչափ պայծառ ծշմարտութեան զրոշմը նորա ամէն մի տողի և մանաւանդ այսպիսի գծերի

մէջ, որոնք ըստ երեսութին նսեմացնել կարող էին նորա նկարագրած աստուածային անձի արժանիքը: Եթէ Քրիստոսի հրաշագործութեանց մասին պատմածները վառ երեւակայութեան ծնունդ լինեին և աւետարանիների նպատակը լինելու չափ գերբնական ներկայացնել նորա կեանքը: Ի՞նչն էր արգելում նաև այս գեղքում պատմելու, թէ Նա այս կամ այն նշանաւոր հրաշքը գործեց: Աեծամեծ զօրութիւններ արաւ: Բայց բոլորովին հակառակն ենք տեսնում: մի մարդ որ կատարելապէս հաւատացած է, թէ Քրիստոս Ամենակաղ Աստուծոյ Որդին է, աշխարհի Փրկիչն ու կեանքի առաջնորդը՝ ամենին չի ատառնուում խոսապանելու, թէ երբեմն Նորա հրաշագործ զօրութիւնն անգիմազրելի արգելքների է հանդիպել: Աւետարանի խիսութիւնը լաւ հասկանալու և մեր Փրկիչ մասին Շշմարիս գաղափար կազմելու համար՝ մենք առանձին ուշադրութիւն պէտք է գարձնենք այսպիսի մասնական երեսոյթների վրայ: Ներկայ միջնադէպը ամենակարեղոր և մանրաքնին խորհրդածութեան արժանի կէտերից մէկն է աւետարանի մէջ, որով բացատրել կարող ենք: թէ ի՞նչ չափով է գործ գրել Քրիստոս աշխարհի վերայց կամ ի՞նչ գեր է խաղացել Նորա երկրաւոր կեանքի մէջ և ի՞նչ բնաւորութիւն ունեցել՝ հրաշք:

Ով փոքր իշատէ ուշադիր կերպով կարգացել է ու աւետարանը՝ նկատած պէտք է լինի անշուշտ, որ ոչ մի հրաշք այսակը առանց օրեւէ զօրեղ բարոյական պատճառի՝ լոկ ցոյցի համար միայն չի կատարուում: Քրիստոս հիւանդների է բժշկում: Քրիստոս օգնում է մարդոց կարիքի և նեղութեան մէջ, Քրիստոս հրաշալի օրինակներով պարզում է իւր խօսքերի Շշմարառութիւնը, բայց երեւք մարդիկ զարմացնելու, կամ նոցա քմահաճութեանց բաւականութիւն տալու համար երկնքից նշաններ վայր չէ բերում: կամ քարերն ու ծառերը իրենց տեղից շարժում: մենք զգում ենք, որ բոլոր Նորա արածները գերբնական լինելով հանդերձ մեզ համար, բնական են նորա համար, որովհետեւ արտասուք տեսնել և սրբել վերքեր շօշափել և քրութել աշեր կարող նեղութիւն և կարիք պէտք

է աեղի տային նորա առաջ, ինչպէս խաւարը տեղի է աալիս լուսոյ առաջ, չարիքը բարութեան առաջ:—Յաձախ պատահում է մեզ լսել ուրիշներից կամ ինքներս հարց ենք աալիս մեզ: թէ ինչո՞ւ այժմ ևս հրաշքներ չեն լինում: ինչո՞ւ Քրիստոսի ժամանակ բոլոր միւս հրաշքների փոխանակ այնպիսի մի խելքից և մաքից վեր հրաշք չեղաւ՝ մեծ հասարակութեան գիմաց, որպէս զի ամենքը ստիպուած լինեին հաւատալ: ինչո՞ւ օրինակ, երբ հրեաները ծաղրելով ասում էին՝ եթէ դու Քրիստոսն ես, իջիր խաչից և հաւատանք, Նա չիջաւ: Սակայն մի լաւ մտածենք: ինչ արգիւնք կունենայ, եթէ յիրաւի մի աշագին հրաշք կատարուի մեր աչքի առաջ: զարգացած մարդիկ պէտք է աշխատեն բնութեան օրէնքներով բացատրել այն, հասարակ ամրոխը կրկին բնութեան մասին ունեցած նախապաշարութեան մերով, և առհասարակ ամենքը պէտք է նայեն իրեւ կախարդական, գաղտնի ոյժերի ազգեցութեամբ յառաջ եկած մի տարօրինակ երեսյթի վերայ, որ նոցա հոգեսր կամ բարոյական կեանքի համար ոչ մի նշանակութիւն չի ունենայ՝ միենոյն է թէ երեւակայած գաղտնի զօրութեանը Աստուծած անունը կտան, թէ ելքարականութիւն, ձգողութիւն ևն:

Խսկ Քրիստոսի բոլոր հրաշքները հոգիների վերայ ազգելու, մարդոց բարոյական վերածնութեան նպաստելու համար էին: Նա հրաշքներ չէ գործել երեւք իւր աստուծային ծագութեան ապացուցանելու նպատակով, այլ նորա շրջապատողներն իրենք գերբնական զօրութիւն տեսնելով Նորա մէջ՝ եզրակացնում էին, որ Նա ինքը գերբնական անձն է: Եթէ նեթագրենք իսկ որ այսօր մէկն ապացուցանէ, թէ աւետարանների պատմած բոլոր հրաշքները բնական կերպով են կատարուել կամ բոլորովին չեն կատարուել: այդ պատճառ չի լինի այնուամենայնիւ մեր հաւատը գեղի Քրիստոս մազի չափ անգամ փոխելու: մեզ համար կմնայ այնուամենայնիւ այն ապաւորութիւնը, որ ոչ ոք մարդկանցից այդպէս չէ խօսել և գործել: Նոյնպիսի աղպաւորութեան շնորհիւ էր, որ առաքեալներն ամենամեծ հրաշքին՝ Քրիստոսի յարու-

թեանը, հաւատացին և այդ հաւատով աշխարհը վերանորոգել կարողացան։ Երբ նոցա Տէրը կենդանի յայտնուեցաւ նոցա մէջ, միանգամից բացուեցան նոցա աչքերը, և աեսան, որ ուրիշ կերպ լինել էլ չէր կարող որ Տէրը մեռնել չէր կարող։ Առանց այդ ներքին համոզման, առանց երկար ժամանակ աստուածային անձի հրապարն իրենց մէջ կրկու և համոզուելու, որ յանձին նորա երկնային, անմահ անապական ինչ յարնուել է աշխարհի վերայ՝ յարուցեալ Քրիստոս իրրեմի ուրուական, մի անբացատրելի ահաւոր երենյթ պէտք է, ներկայանար և սարսափ միայն ազգեր, եթէ Նոր իրրե տմէնքի սրտին մօտ և ամէնքին ծանօթ մի բարեկամ ներկայացաւ և յաւիտենական կեանքի յօյս և առաջնորդ եղաւ՝ առաքեալների գեափ Նո ունեցած ներքին վատահութեան շնորհիւ էր, և այդ վատահութիւնը պէտք է ունեցած լինի ամէն ոք մեզանից թէ Նորա ժամանակակիցներից, որպէս զի կարողանայ Նորա աստուածային եւթիւնն ու գործերն ըմբռնել։ Իւր այդպիսի վատահութիւն պակաս է՝ այնահետ փակ է հոգւոյ աշքը Նորան և Նորա գործերը տեսնելու համար, այնահետ մարդիկ ամենամեծ հրաշքները թեղղվերուզի օգնութեամբ կատարուած կհամարեն, և երկնքի բարիքը նոցա համար կլինի ինչպէս խոզերի առաջ ձգած մարդարիտ։ Այդ է պատճառը, որ Քրիստոս ամէն մի հրաշալի բժշկութիւնից առաջ հաւատ է պահանջում և մնի գաւառի» մէջ ոչ մի գորութիւն գործել չէր կարող։

«Եւ զարմանայր վասն անհաւատութեան նոցա»։ — Սխալ գաղափար ունինք մենք Աստուծոյ ամենակարողութեան մասին, սովոր լինելով աշխարհի վերայ ամէնից մեծ բանը բռնի ոյժը համարել՝ մենք ենթագրում ենք, թէ Աստուծոյ համար ևս դիմաւորը իւր ամենակարող զորութիւնն է, որով ամենաորեք զործ է զընում իւր կամքը։ Սակայն ոյժը նշանակութիւն ունի միայն նիւթեական, մեքենական աշխարհում։ ուժով կարելի է զուցէ սարեր զորիւն աշխարհը յեղաշրջել բայց մի շնչին, անմիտ անբարյական մարդու ազնիւ, իմաստուն և բարյական գարնեն չի կարելի։ Հարկաւ, ինչ որ մարդու համար անկարելի է՝

կարելի է Աստուծոյ համար, բայց նոյն ինքն Ամենակարող Աստուծութը միայն յաճախ մեղ անյայտ բարյական միջաներավ կարող է բարյական ազգեցութիւն զործել, և ոչ երբեք ուժով։ Տիկերքի բոլոր արարածների համար Նո հասաց, և եղենու բայց երբ կարզը մարդուն հասաւ, հարկաւ որ եղաւ առանձին խրնամք և աշխատութիւն նորա համար՝ հարկաւ որ եղաւ, որ Աստուծութիւնը սեփական շունչը տայ, և այդպէս միայն յառաջ եկաւ այն էակը, որ ընդունակ է Աստուծոյ շնչից երածը՝ հոգեօրը, բարյականն ըմբռնելու։ Եւ ամէն անզամ, երբ այդ էակը մի քայլ յառաջազիմութիւն պէտք է անէ հոգեօրը բարյական ասպարիզում՝ պահանջում է կրրին, որ մի աստուածաբարուխ հոգեօրը ազգեցութիւն ներգործէ նորա հոգւ ոյ վերայ. իսկ գորտ համար անհրաժեշտ է, որ նորա հոգին պատրաստ լինի այդ ազգեցութիւնն ընդունելու, հարկաւ որ է, որ սկզբնական աստուածատուր շունչը կենդանի լինի կամ կենդանանայ, որպէս զի նոր հոգեօր յաւելումը հարազատ բնակարան գտնէ, Աստուծոյ հոգեօր նորհներն ընկնում են մեզ վերայ ինչպէս լուսոյ ծառագայթները և որպէս զի նորքա լոյս տան մեր հոգւոյ մէջ, հարկաւ որ է որ հոգին աշք կամ լրւածուաներ ունենայ, Այդ հոգեօր ահսողութիւնը, վերինը զիտելու և աստուածատին ընդգրկելու ընդունակութիւնն է, ահա որ հաւատ է, կոչուում և առանց որի ոչ մի հրաշք, ոչ մի երկնային զօրութիւն մեր ներքին աշխարհի մէջ փոփոխութիւն յառաջ բերել չի կարող։

Սակայն հարց է մնում զիս, ինչու Քրիստոս յատկապէս իւր հայրենիքում հաւատ չէր զտուում, ինչու Նորա մերձաւորները ծանօթները զրկուած էին այն հրաշալի նորհներից, որոնք առառութեամբ օտարների վերայ էին թափուում։ Առետարանը այդ հարցին ևս որոշ պատասխան է, տալիս Քրիստոսի գաւառացիները նախազարուած էին Նորա մասին ունեցած մարմաւոր ծանօթութիւններով։ նոցա մարդի մէջ ամրացել էր այն նախապաշարուամը, թէ Քրիստոս մի հասարակ հիւմնի որդի է, ուրիշն նոքն էլ հիւմն պէտք է լինի, ուրիշ աւելի մէծ բան

լինել չի կարող իսկ նախապաշարումը հաւատի ամենամեծ թշնամին է, որ նորա խեղաթիւրումը լինելով՝ շատ անգամ սխալմամբ խսկական հաւատի տեղ է ընդունուում: Մենք ամէնքս գերի ենք հազար ու մի նախապաշարումների որոնք բազմատեսակ աղբիւներից են յառաջ գալիս: Խեցն է օրինակ, որ ներկայ սերունդը հաւատ քիչ ունի՝ գերբնական աշխարհի գոյութեանը հաւատալ զրեթէ չի կարող միթէ նորանից: որ զիտութիւնն և քաղաքակրթութիւն յառաջ են գնացել մարդիկ զարգացել են, ամենեին: իրերի բընական ընթացքով զրազուող զիտութիւնը ինչպէս կարող է հերքել կամ հասատել այն, ինչ որ իւր իշխանութեան ասհմանից գուրս է: Եթէ ևս իմ հոգւոյ խորքում զգում եմ մի գերբնական զօրութեան աղբեցութիւնը, կամ մի զերբնական եակի մերձաւ որութիւնը՝ որ ընագէտը կամ որ փիլիսոփան կարող է ապացուցաներ թէ իմ զգացումը խարուսիկ է և իմ ճանաչած զօրութիւնը գոյութիւն չունի: Քիչ են միթէ զարգացած մարդիկ, որոնք քրիստոնէական լուսաւոր հաւատը ծաղրում են, բայց իւրենք հաւատում են ամէն տեսակ խաւարային ոյժերի՝ հաւատում են, թէ երր մի քանի մարդիկ մութ սենեակի մէջ ձեռները սեղանի վերայ դնեն, այդ սեղանը ինքն իրեն կշարժի: թէ ինչ ինչ մահկանացուներ հրաշալի զօրութիւն ունին մեռած հոգիները դուրս կանչելու, նոցանից զանազան զաղանիքներ իմանալու, և լի: իրօք ոչ մի մարդ չկայ, որ բաւականանայ այս աշխարհի մասին ունեցած ծանօթութիւններով և չձգաւ աւելին իմանալու, ում հաւատն այդ աւելին չէ ընծայում՝ նա անպատճառ նախապաշարումների մէջ կընենի: Մի գիտնական, որ պնդում է, թէ Աստուած չէ սաեղծել աշխարհս և ոչ մի մասնակցութիւն չունի նորա ընթացքի մէջ, այլ ամէն ինչ ինքն իրեն է յառաջ եկել և բնական կարգով զարգայել՝ ոչ մի փաստ չունի ի հարկ է գորա համար, այլ ժամանակակից կրթութեան տուած նախապաշարումներով է առաջնորդուում: Բաւական է վերացնել այդ նախապաշարումները, որ հաւատըն իւր գործը սկսէ, բաւական է յաղթել

միայն այն մեծ նախապաշարման, թէ գերբնական ոչինչ չկայ և չի կարող միջամտել մեր կեանքի մէջ՝ որպէս զի ամէն քայլափոխում հրացք և աստուածային զօրութեան ներկայութիւն տեսնենք:



ԹՈՒՂԹ ՀԱՅՈՅ Ի ՊԱՐՍՍ,

Ա. Ա.

ՈՒՂՂԱՓԱՌԱՅ.

Արբասէր և ճշմարտասէր և սուրբ հաւատոց, և առաւել Քրիստոսին՝ ծառայեցելոց, տէրանց մերոց և եղբարց սրբոց հաւատակցաց՝ Տէր Դանիէլ Քարմա եպիսկոպոս և Մաղքայ և Ծաւտայ քովիսկոպոսունք, և Երայ և Մարի երիցունք, Միր Նորմիզզ և Արդահայ սարկաւագունք, և աղատ մարդիկ՝ Արտաշիր և Բրատոկ և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք, յԱրմբան շահաստանի, ի Գարմեկան շահաստան՝ ի Կարմենանան նահանգ, Յոհան երիցապետ և աղատ մարդիկ, և Աշարազպանդակ ի Մազոկան տաճկաց պահապետ, և Հարթայի Մուշեղեան և այլ քրիստոնեայք սուրբ հաւատացեալք, որք ի Պերոզ՝ Ծապուհ ի տաճկաց քաղաքի, Յովնամբան անապատաւոր, և այլ սուրբ հաւատացեալք, քրիստոնեայք յԱսորմատանի և ի Խուժամատանի և ի Հերմժ, և ի Նոնաբարսագէ, որ ի Կնի (Որոգենէս?) անապատաւոր, և Սահակ Բղադ շահաստանի քովիսկոպոս, Յակոբ Բեղեկաթարա և որ այլ սուրբ հաւատացեալք քրիստոնեայք յԱսորմատանի և ի Խուժամատանի և ի Հերմժ, և ի Նոնաբարսագէ, և Բասագէ Իմամթեան անապատաւոր, և աղատ մարդիկ՝ Գներա և այլ հաւատացեալք քրիստոնեայք նոշիբականին ի Նիւռուէ Նահանգ, և առ ամենայն եպիսկոպոսունս և առ քովիսկոպոսունս, և առ երիցունս և առ սարկաւագունս, առ անապատաւորս և առ աշխարհականըս, առ աղատս և առ գեղջաւագունս, առ մեծամեծըս և առ փոքունս, և առ ամենայն հաւատացեալս Պարսից աշխարհի, որ ընդ Կաւատայ արքայից արքայի ընդ իշխանութեամբ է.ք — ի Մեծաց Հայոց ի Բարգենայ ի Հայոց եպիսկոպոսապետ և ի Նորին աթոռակցաց՝ ի Մերշապհոյ Մամրկոնից եպիսկոպոսէ, Ներսեսէ Մարգաբետական եպիսկոպոսէ, ի Տեանտորյ Հարքայ եպիսկոպոսէ, ի Սամուելէ Բզնունեաց եպիսկոպոսէ, ի Փավիկասայ և ի Սամուելէ Բասենոյ եպիսկոպոսաց, ի Թամթլոյ Աշարունեաց եպիսկոպոսէ, ի ՅԱղանայ Խոռիսուունեաց եպիսկոպոսէ, ի ՅԱղատայ Տայոց եպիսկոպոսէ, ի Տաճատայ Արշամունեաց եպիսկոպոսէ, ի Պանիելէ Առշառու-